**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ ԱՐԹՈՒՐԻ**

# ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

**ԵՐԵՎԱՆ-2017թ.**

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում**

| | |
|---|---|
| ***Գիտական ղեկավար՝*** | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս<br>**Յուրի Միքայելի Սուվարյան** |
| ***Պաշտոնական ընդդիմախոսներ՝*** | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր<br>**Վարդան Ալբերտի Սարգսյան**<br><br>տնտեսագիտության թեկնածու<br>**Վիլեն Վիկտորի Խաչատրյան** |
| ***Առաջատար կազմակերպություն՝*** | **Երևանի պետական համալսարան** |

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. հոկտեմբերի 5-ին ժամը 14:00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան 0025, Մ. Նալբանդյան փող. 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. սեպտեմբերի 5-ին

014 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Ս.Ա. Գևորգյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

***Ատենախոսության թեմայի արդիականությունը:*** Տնտեսության տեխնոլոգիական զարգացման տեմպերի անդադար աճը օր-օրի հանգեցնում է տնտեսվարման բազմաթիվ ոլորտների վերափոխման, որոշ ուղղությունների կատարելագործման, իսկ որոշ ուղղությունների անկման և նույնիսկ վերացման: Ուսումնասիրելով գիտելիքահենք նորամուծական տնտեսական համակարգ ունեցող տարբեր աշխարհագրական բնութագրիչներով պետությունների տնտեսական զարգացման փորձը՝ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ երկրներից յուրաքանչյուրն ունեցել է զարգացման՝ իրեն բնորոշ մոդելը, իսկ տվյալ մոդելների հիմնական ընդհանրությունը դրանց ուղղությամբ կիրառվող համակարգային մոտեցումն է, որը կյանքի կոչելու համար տվյալ պետությունները միջոցներ և ջանքեր չեն խնայում:

Արդի պայմաններում ՀՀ տնտեսությունը բախվում է նոր մարտահրավերների՝ կապված տեխնոլոգիական զարգացման, մրցունակ բարձր տեխնոլոգիական ապրանքների արտադրության և նորամուծական ձեռներեցության զարգացման հետ: Գաղտնիք չէ, որ բնական պաշարներով ոչ այնքան հարուստ մեր երկրում առավել բարձր ավելացված արժեքի ստեղծմանը միտված տնտեսական քաղաքականության առանցքում պետք է լինեն նորամուծությունների վրա հիմնված՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, ճշգրիտ սարքաշինության, դեղագործության, նանոտեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիական այլ ուղղությունների զարգացումը: Ուստի, ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության զարգացման հիմնական մարտահրավերներին արձագանքելու, այն է՝ բարձր տեխնոլոգիական արտադրանքի մրցունակությունն ապահովելու, գիտատեխնիկական զարգացման մեջ մասնավոր հատվածի ներգրավվածության մակարդակը բարձրացնելու և «գիտություն»-«կրթություն»-«արդյունաբերություն» կապն ամրապնդելու միջոցառումների բացահայտման անհրաժեշտությամբ:

***Հետազոտության նպատակները և խնդիրները:*** Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության մրցունակության ապահովման հայեցակարգային մոտեցումների մշակումը և իրագործումը վերաբերող մարտահրա-

վերների բացահայտումն է, ինչպես նաև՝ տվյալ բնագավառում առկա խնդիրների ուսումնասիրությունը, բացթողումների վերհանումը և համապատասխան լուծումների պարզորոշումը: Տվյալ նպատակին հասնելու համար ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել ՀՀ կրթության և գիտության ոլորտների զարգացվածության մակարդակը նկարագրող հիմնական ցուցանիշները, բնորոշել երկրի գիտական ներուժը,
- վերլուծել ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսական գործունեությանը և բարձր տեխնոլոգիական արդյունաբերությանը վերաբերվող հիմնական ցուցանիշները, խնդիրները և վերլուծություն-ների արդյունքում առաջարկել դրանց լուծման այլընտրանքային տարբերակներ,
- ուսումնասիրել մրցունակության բարձր մակարդակ ունեցող գիտելիքահենք տնտեսական համակարգերի, ազգային նորամուծական համակարգերի կերտման և զարգացման միջազգային փորձը և ՀՀ-ում տեղայնացման հնարավորություն-ները,
- ուսումնասիրել ՀՀ-ում զարգացող բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտները, ապացուցել, որ ՀՀ-ում թողարկվող բարձր տեխնոլոգիական ապրանքները և ծառայություն-ները որոշակիորեն մրցունակ են և վերհանել դրանց մրցունակության մակարդակի հավելյալ բարձրացման մեխանիզմները:
- ուսումնասիրել ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսական գործունեությանը վերաբերվող իրավական ապահովման գործիքակազմը՝ վերհանելով նոր մոտեցումներ և ընդգծելով դրանց կիրառման կարևորության աստիճանը,
- վերլուծել ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսական գործունեության մրցունակության ապահովման գործոնները նկարագրող հիմնական ցուցանիշները, բնորոշել համընդհանուր գիտելիքահենք տնտեսության նկատմամբ դրանց ազդեցության մակարդակները և բացահայտել գիտելիքահենք տնտեսության զարգացման և մրցունակության ապա-հովման գերակայություններ:

***Հետազոտության օբյեկտը և առարկան:*** Ատենախոսության հետազոտության օբյեկտը ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսությունն է, իսկ առարկան՝ ՀՀ-

ում գիտելիքահենք տնտեսության մրցունակության ապահովման առաջնային գործոնների և հիմնական մարտահրավերների բացահայտումը:

***Հետազոտության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:*** Ատենախոսությունում դիտարկվող խնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ որպես տեսական և գիտամեթոդական հիմք հանդես են գալիս տնտեսագիտությանը և կառավարմանը վերաբերվող գրականության դասական և ժամանակակից մոտեցումները, մեթոդները և տեսությունները՝ հեղինակված հայ և օտարերկրյա գիտնականների, համապատասխան փորձագիտական խմբերի և ուսումնասիրողների կողմից:

Աշխատանքում տեղ գտած հետազոտությունների և դիտարկումների համար հիմք են հանդիսացել ՀՀ մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերը, միջազգայնորեն ընդունելի մեթոդական ուղեցույցները և իրավական փաստաթղթերը, ՀՀ ԱՎԾ-ի, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների և ՀՀ ֆինանսների նախարարությունների, ՀՀ ԿԲ-ի, ինչպես նաև այլ միջազգային կառույցների և այլ պետական ու պետություն-մասնավոր գործընկերության (այսուհետ՝ ՊՄԳ) վրա հիմնված կազմակերպությունների կողմից հրապարակվող զեկույցները, վիճակագրական, վերլուծական նյութերը, էլեկտրոնային տվյալների բազաները և էլեկտրոնային կայքերում տեղակայված վիճակագրական կամ լրատվական բնույթի նյութեր:

Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունները, որոնք արտացոլված են ատենախոսության վերլուծական հատվածներում, հիմնված են վիճակագրական, տնտեսաչափական, համեմատական վերլուծությունների, մեթոդների և դիտարկումների վրա:

***Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:*** Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում, որպես գիտական նորույթ՝ առանձնապես կարևորվում են հետևյալները.

- Բացահայտվել են ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների, դեղագործության, ճշգրիտ սարքաշինության և գիտելիքահենք տնտեսության այլ ոլորտների զարգացման հիմնախնդիրները, գնահատվել են տվյալ ոլորտների մրցունակությունը բնորոշող ցուցանիշները:

- Տնտեսաչափական գնահատման հիման վրա բացահայտվել է դեղագործության ոլորտում հասույթի շարժի վրա արտահանման ծավալների փոփոխության ազդեցությունը, որի արդյունքում հիմնավորվել և առաջարկվել են ոլորտի զարգացման խթանման ուղղությամբ նոր մոտեցումներ (հարկային արտոնությունների տրամադրում, ոլորտային նորամուծական կլաստերի ստեղծում և այլն):
- Բացահայտվել են ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության մրցունակությունը բնորոշող հիմնական գործոնները, տնտեսաչափական վերլուծությունների արդյունքում վերհանվել է դրանց միջև կապը, ինչի արդյունքում մասնավոր ընկերությունների կողմից ԳՀՓԿԱ-ների ֆինանսավորման խթանումը ներկայացվել է որպես ՀՀ գիտելիքահենք տնտեսության մրցունակության ապահովման առաջնային գործոն և առաջարկվել են ՀՀ-ում տվյալ ուղղության զարգացման նոր մոտեցումներ (վենչուրային ֆինանսավորման ինստիտուտի գործարկում, ՊՄԳ հիման վրա նորամուծական ձեռներեցության զարգացում, հարկային օրենսդրության փոփոխություններ և այլն):

***Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը:*** Ատենախոսության շրջանակներում իրականացված և ներկայացված հետազոտության և վերլուծությունների արդյունքները, մշակված առաջարկությունները կիրառելի են ՀՀ կառավարության, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների, ՀՀ ֆինանսների, ՀՀ կրթության և գիտության նախարարությունների կողմից՝ պետության սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության և համապատասխան ռազմավարությունների և հայեցակարգերի մշակման նպատակով: Ատենախոսությունում ներկայացված գիտահետազոտական աշխատանքների գործնական և տեսական արդյունքները կարող են օգտագործվել՝ ՀՀ տնտեսական աճի, տնտեսական զարգացման քաղաքականության, գիտելիքահենք տնտեսական գործունեության և նորամուծությունների խթանման հիմնահարցերով զբաղվող և գիտահետազոտական ուսումնասիրություններ իրականացնող տնտեսագետների, հետազոտողների, վիճակագիրների և ասպիրանտների կողմից:

***Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները***: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի կողմից՝ ՀՀ-ում և ՌԴ-ում հրապարակված 8 (ութ) գիտական հրապարակումներում:

***Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:*** Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 168 մեքենագիր էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության ***ներածությունում*** հիմնավոր կերպով ներկայացված է ուսումնասիրված թեմայի և կատարված հետազոտության արդիականությունը, նպատակն ու խնդիրները, տեսամեթոդաբանական հիմքերը, հետազոտության օբյեկտն ու առարկան, դրա արդյունքների գործնական նշանակությունը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության ***առաջին՝ «Գիտելիքահենք տնտեսության գործունեության էությունը և առանձնահատկությունները»*** գլխում դիտարկվել են գիտելիքահենք տնտեսության էությանը, բնույթին և կառուցվածքին վերաբերվող դիտարկումները և սահմանումները: «Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ)» փորձագիտական ձևակերպման համաձայն. «գիտելիքահենք տնտեսությունները ուղղակիորեն հիմնվում են գիտելիքի և տեղեկատվության թողարկման, մատակարարման և օգտագործման վրա»: Գիտության տնտեսությունը ենթադրում է. «տնտեսական աճն ընդլայնելու նպատակով՝ գիտելիքի ձեռքբերում, ստեղծում, տարածում և արդյունավետ օգտագործում»:[1]

---

[1] OECD, The knowledge-based economy, Organisation for economic cooperation and development, Paris 1996, 46p. p9.

Գիտելիքահենք տնտեսության կառուցվածքն ու առանձնահատկություններն ուսումնասիրելու նպատակով՝ տվյալ գլխում ներկայացվում է գիտելիք, տեղեկատվություն, տեղեկատվական հասարակություն, տեխնոլոգիա, կրիտիկական տեխնոլոգիա, բարձր տեխնոլոգիա, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ (այսուհետ՝ ԳՀՓԿԱ), նորամուծություն, ազգային նորամուծական համակարգ և ազգային նորամուծական կարողություն հասկացությունների էությունը, տեսամեթոդաբանական սահմանումները և բացահայտվում է վերջինների դերակատարությունը գիտելիքահենք տնտեսության կայացման գործընթացներում: Կայացած գիտելիքահենք տնտեսական համակարգերի ուսումնասիրության նպատակով ներկայացվում է տվյալ ոլորտի միջազգային փորձը՝ տվյալ ուղղությամբ զարգացած պետությունների օրինակներով: Վերը նշված հասկացությունների տեսամեթոդաբանական ձևակերպումների դիտարկման արդյունքում՝ որպես գիտելիքահենք տնտեսության հիմնական շարժիչ ուժ՝ տեսականորեն վեր է հանվում ազգային նորամուծական համակարգի և դրա համակարգված գործունեության արդյունքում երկրի ազգային նորամուծական կարողության զարգացման գաղափարի կարևորությունը:

Տվյալ ատենախոսության ***երկրորդ՝ «Գիտելիքահենք տնտեսության դերը և առկա իրավիճակը ՀՀ-ում»*** գլխում վիճակագրական և վերլուծական տվյալների հիման վրա բնութագրվում է ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության զարգացման արդի մակարդակը, ինչի նպատակով վերլուծվում են ՀՀ գիտակրթական համակարգը և տնտեսության բարձր տեխնոլոգիական ճյուղերը, մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՏ), դեղագործության, համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրության և աէրոտիեզերական արդյունաբերության ոլորտները:

Գիտակրթական ոլորտի ուսումնասիրությունների արդյունքում վերհանվում են ոլորտում առկա մի շարք խնդիրներ՝ կապված ՀՀ-ում գիտնականների թվաքանակի նվազման, ինչպես նաև ԳՀՓԿԱ-ների ֆինանսավորման մեջ պետության մասնաբաժնի գերակշռման հետ, ինչը փաստորեն ցույց է տալիս մասնավոր հատվածի թույլ ներգրավվածությունն այս ուղղությամբ: 2015թ.-ի տվյալներով հետազոտությունների և մշակումների

վրա ՀՀ պետական բյուջեից իրականացված ծախսերը կազմել են այս ուղղությամբ համախառն ծախսերի 73,8%-ը (գծապատկեր 1):




***Գծապատկեր 1.*** **ՀՀ-ում հետազոտությունների և մշակումների վրակատարած համախառն ծախսերի և ՀՀ պետական բյուջեից կատարված ծախսերի տարեկան դինամիկան 2003-2015թթ. (մլն. դրամ)**[2]

Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս բարձր տեխնոլոգիական տնտեսվարման ուղղություններից ՀՀ-ում առավել արագ զարգանում է ՏՏ ոլորտը, որի ուղղությամբ պետական կարգավորման գործառույթը աչքի է ընկնում բավականին բարձր արդյունավետությամբ, իսկ ոլորտն ինքնին ներկայումս գտնվում է արտապատվիրման ապահովման փուլից՝ որպես ազգային ինքնուրույն համակարգ ձևավորվելու անցումային փուլում: ՀՀ-ում ներկայումս տեղակայված են ՏՏ ոլորտում բարձր հաջողությունների հասած վերազգային կազմակերպությունների մի շարք մասնաճյուղեր և զարգանում է արագ ոլորտի փոքր ընկերությունների կազմավորումը, որոնք հիմնականում ներգրավված են արտասահմանից եկող արտապատվիրման գործընթացներում: Գծապատկեր 2-ում արտացոլվում է ՏՏ ոլորտի արտադրության ծավալների աճի տարեկան դինամիկան որտեղ երևում է, որ 2016թ.-ին ոլորտում գրանցվել է շուրջ 30% աճ: ՏՏ ոլորտի զարգացման հիմնական մարտահրավերը անհրաժեշտ աշխատուժի պակասն է: Այս ուղղությամբ իրականացվում են բազմաթիվ միջոցառումներ՝ կազմա-

---

[2] Հաշվարկվել է հեղինակի կողմից՝ հետևյալ աղբյուրի հիման վրա. ՀՀ ԱՎԾ «ArmStatBank.am»-ի «Բնակչություն և սոցիալական գործընթացներ» բաժնի «Կրթություն» ենթաբաժնի «Գիտատեխնիկական աշխատանքներն ըստ ցուցանիշների և տարիների» տվյալների բազա (armstatbank.am)

կերպությունների և բուհերի կողմից, որոշ դեպքերում նաև՝ վերջինների համագործակցության արդյունքում, այնուամենայնիվ, ոլորտի զարգացման արագընթաց տեմպը օր-օրի պահանջում է նորանոր մասնագետների՝ ոլորտում ներգրավվածության բարձր աստիճան:




***Գծապատկեր 2.* ՀՀ-ում 2010-2016թթ.-երին դրամական արտահայտությամբ տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների աճի դինամիկան (մլն. դրամ)**[3]

ՀՀ-ում առկա աէրոտիեզերական արդյունաբերության ուղղությամբ, չնայած անցյալում գրանցված մի շարք հաջողություններին՝ զարգացման միտում չի նկատվում, իսկ համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրության ոլորտի տարեկան ցուցանիշները հիմնականում անփոփոխ են:

Երկրում ինտենսիվորեն զարգանում է դեղագործության ոլորտը: Վիճակագրական տվյալների համաձայն՝ աճող ցուցանիշներ են գրանցվել թե՛ դեղագործական արտադրանքի թողարկման, թե՛ վերջինի արտահանման ուղղությամբ: Տնտեսաչափական գնահատումը ցույց է տալիս, որ ՀՀ-ում դեղագործության ոլորտի հասույթի փոփոխության շուրջ 40%-ը բացատրվում է արտահանման ծավալների փոփոխությամբ: Այս վերլուծությունը վերհանում է այն կարծիքը, որ ՀՀ դեղագործական արտադրանքի մրցունակության մակարդակը՝ այն ներմուծող

[3] Կազմվել է հեղինակի կողմից՝ հետևյալ աղբյուրի հիման վրա. ՀՀ ԱՎԾ Էլեկտրոնային կայք, Հրապարակումներ, ՀՀ Սոցիալ-տնտեսական իրավիճակը 2010-2011, 2011-2012, 2012-2013, 2013-2014, 2014-2015, 2015-2016թթ.-ների Հունվար-Դեկտեմբերի դրությամբ տարեվերջյան զեկույցներ, Առևտուր և ծառայություններ ենթաբաժին

երկրներում որոշակիորեն բարձր է, և ստացված ցուցանիշները համոզիչ են՝ դեղագործությունը ՀՀ-ում որպես կրիտիկական տեխնոլոգիա սահմանելու և հավելյալ արտոնությունների տրամադրումը հիմնավորելու տեսանկյունից: Ընդհանուր առմամբ ՀՀ տնտեսության գիտելիքահենք ուղղություններում կարելի է նկատել բավականին տպավորիչ աճի ցուցանիշներ՝ մասնավորապես բարձր տեխնոլոգիական արտադրատեսակների արտահանման ուղղությամբ:




***Գծապատկեր* 3. 2010-2016թթ-ներին բարձր տեխնոլոգիական ապրանքատեսակների՝ ՀՀ-ից արտահանման տարեկան դինամիկան (ԱՄՆ դոլար)**[4]

Վիճակագրական տվյալները փաստում են, որ ՀՀ-ից նշված արտադրանքի արտահանումը 2016թ.-ի ընթացքում կազմել է շուրջ 16,6 մլն. ԱՄՆ դոլար, ինչը գրեթե 2 անգամ ավել է օրինակ՝ 2014թ.-ին գրանցված նույն ցուցանիշից (գծապատկեր 3):

ՀՀ գիտելիքահենք տնտեսության հիմնախնդիրների վերհանման և հիմնական մարտահրավերների բացահայտման նպատակով առենախոսության տվյալ գլխում ներկայացվել է ոլորտի SWOT վերլուծությունը (աղյուսակ 1):

Վերլուծությունն իրականացնելու և ՀՀ գիտելիքահենք տնտեսության մրցունակության մակարդակը բնորոշելու նպատակով դիտարկվում են 2012թ.-ին Համաշխարհային Բանկի փորձագիտական խմբի կողմից կազմված «Knowledge Economy Index 2012» զեկույցի (որը երկրների գիտելիքահենք տնտեսության վարկանշման վերջին հրապարակված զեկույցն է)

[4] Կազմվել է հեղինակի կողմից՝ հետևյալ աղբյուրի հիման վրա.Համաշխարհային բանկի էլեկտրոնային տվյալների բազա URL: http://data.worldbank.org/indicator/TX.VAL.TECH.CD?locations=AM

հիմքում ընկած մեթոդաբանությունը, որն անվանվում է «Knowledge Assessment Metodology» (KAM այսինքն՝ «Գիտելիքի գնահատման մեթոդաբանություն» (ԳԳՄ)), ինչպես նաև այլ մոտեցումներ: ԳԳՄ-ն հիմնված է հետևյալ չորս ցուցանիշների վրա.

1) տնտեսական նախադրյալներ և ինստիտուցիոնալ համակարգ,
2) նորամուծական և տեխնոլոգիական յուրացման մակարդակ,
3) կրթության զարգացվածության մակարդակ,
4) ՏՏ ոլորտի զարգացվածության մակարդակ:[5]

Ըստ այդմ, համաձայն իրականացված SWOT վերլուծության՝ ատենախոսության այս հատվածում համառոտ կերպով նկարագրված է ՀՀ գիտելիքահենք տնտեսության համապարփակ պատկերը և այն հիմնական մարտահրավերները, որոնք հարկ է հաղթահարել կարճատև ժամանակահատվածում՝ ՀՀ գիտելիքահենք տնտեսության մրցունակությունն ապահովելու նպատակով: Մասնավորապես՝ տվյալ տեսակի մարտահրավերների շարքում առանձնացված է ուղեղների արտահոսքի դադարեցումը, գիտակրթական ոլորտի և ձեռներեցության ու արդյունաբերության ոլորտների միջև կապի ամրապնդումը, ԳՀՓԿԱ-ներում օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈւՆ) խթանումը ֆինանսավորման ժամանակակից ինստիտուտների կիրառմամբ և այլն:

Օրինակ՝ ՀՀ ԱՎԾ տվյալների համաձայն՝ հետազոտությունների և մշակումների վրա օտարերկրյա միջոցներից կատարված ներքին ծախսերը 2015թ.-ին, 2014թ.-ի հետ համեմատած՝ կրճատվել են 51%-ով՝ կազմելով 286,9 մլն դրամ (գծապատկեր 4), ինչը կազմում է 2015թ.-ի համընդհանուր ՕՈւՆ-երի 0,34%-ը, որը բավականին ցածր ցուցանիշ է, և դրա բարձրացումը անհրաժեշտ գործընթաց է ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության մրցունակության ապահովման տեսանկյունից:

***Աղյուսակ 1.* ՀՀ գիտելիքահենք տնտեսության ներկայիս իրավիճակի SWOT վերլուծության մատրից**

[5] Knoema էլեկտրոնային տվյալների բազա, , URL: https://knoema.com/aomssce/knowledge-economy-index?location=Armenia&indicator=Knowledge%20Economy%20Index

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ➢ Գիտության և կրթության ոլորտներում ներուժի և ավանդույթների առկայություն,<br>➢ ՏՏ ոլորտի ինտենսիվ աճ,<br>➢ Բարձր տեխնոլոգիական ոլորտներում հաջող-ության պատմությունների առկայություն<br>➢ Տեղեկատվական հասարակության կայացման միտումներ | ➢ ԳՀՓԿԱ-ների ֆինանսավորման ցածր մակարդակ<br>➢ «Գիտություն-կրթություն-ձեռնարկատիրական ոլորտ» թույլ կապեր, տեխնոլոգիաների տրանսֆերի թերզարգացվածություն,<br>➢ Արդյունաբերության կողմից գիտական արդյունք-ների թույլ կլանում<br>➢ ՕՈւՆ-ների մակարդակի անկում (նաև գիտության ոլորտում)<br>➢ Տարածքային անհամաչափ զարգացում, նորամուծական կլաստերների բացակայություն |
| **Հնարավորություններ** | **Սպառնալիքներ** |
| ➢ Հայաստանի միացումը Հորիզոն 2020 ծրագրին<br>➢ Վենչուրային և ինկուբատոր հիմնադրամների առկայություն<br>➢ Արտաքին առևտուրը խթանող արտաքին տնտեսական հարաբեր-ություններ (անդամա-կցություն՝ ԵԱՏՄ, ԵՄ արևելյան գործընկեր-ություն, ԱՀԿ, ՀՀ-Իրան հարաբերություններ)<br>➢ Սփյուռքի առկայությունը որպես գիտելիքահենք տնտեսության զարգաց-ման կարողությունների աղբյուր | ➢ Արտագաղթ և ուղեղների արտահոսք<br>➢ Ներտարածաշրջանային աշխարհաքաղաքական լարված իրադրություն<br>➢ Կոռուպցիայի բարձր մակարդակ |




***Գծապատկեր 4.*** **ՀՀ-ում 2005-2015թթ.-ներին հետազոտությունների և մշակումների օտարերկրյա միջոցներից կատարված ներքին ծախսերի դինամիկան (մլն. դրամ)**[6]

Ատենախոսության ***երրորդ՝ «ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության մրցունակության ապահովման անհրաժեշտ ուղիները»*** գլխում տնտեսաչափական վերլուծությունների են ենթարկվել բացահայտված՝ ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության մրցունակությունը բնորոշող հիմնական ցուցանիշները, ինչի արդյունքում վերհանվել է դրանց միջև կապը և դուրս են բերվել ՀՀ գիտելիքահենք տնտեսության մրցունակության ապահովման առաջնային գործոնները:

Որպես գիտելիքահենք տնտեսության մրցունակության ապահովման անհրաժեշտ ուղիները մատնանշող ցուցանիշ՝ տնտեսաչափական վերլուծության են ենթարկվել «Գլոբալ մրցունակ-ության զեկույց»-ում հրապարակվող «Գլոբալ մրցունակության ինդեքս»-ի բաղադրիչ հանդիսացող «Նորամուծություններ» հենասյան մեջ ներառված 7 ցուցանիշները (նորամուծական կարողություն, ԳՀԻ-ների որակ, ԳՀՓԿԱ-ների ուղղությամբ կազմակերպությունների իրականացրած ծախսեր, ԳՀՓԿԱ ուղղությամբ գիտություն-կրթություն-արդյունաբերություն փոխգործակցություն, բարձր տեխնոլոգիական ապրանքների պետական գնումներ, գիտնականների և ճարտարագետների առկայություն, մեկ

[6] Կազմվել է հեղինակի կողմից՝ հետևյալ աղբյուրի հիման վրա. ՀՀ ԱՎԾ «ArmStatBank.am»-ի «Բնակչություն և սոցիալական գործընթացներ» բաժնի «Կրթություն» ենթաբաժնի «Գիտատեխնիկական աշխատանքներն ըստ ցուցանիշների և տարիների» տվյալների բազա (armstatbank.am)

միլլիոն բնակչության հաշվով միջազգայնորեն ճանաչված արտոնագրերի քանակ): Տվյալ տեսակի դիտարկման նպատակահարմարությունը բխում է այն հանգամանքից, որ վերոնշյալ հենասյան բոլոր 7 գործոնները անմիջականորեն առնչվում են դիտարկելի գիտություն-նորամուծություն-առևտրայնացում շղթային և արտացոլում են դրա հիմնական կառուցվածքը: Վերլուծությունը խաչաձև-հատվածական բնույթի է, որի հիմքում ընկած են որպես որոշակիորեն համանման դիտարկվող պետությունների (Արևելյան Եվրոպայի, Միջին Ասիայի և Մերձավոր Արևելքի) համապատասխան տարեկան տվյալները: Վերլուծության արդյունքում ստացված ելքային տվյալները վերաբերվում են ցուցանիշներից միայն 5 գործոններին, քանի որ մուլտիկոլենարության և այլ պատճառներով՝ մնացած ցուցանիշները չեն բացատրում «նորամուծություն» հենասյան դիտարկելի փոփոխությունները: Բացի այդ դիտարկվել են նաև վերոնշյալ զեկույցի այլ ցուցանիշներ, մասնավորապես՝ «ՕՈւՆ և տեխնոլոգիաների տրանսֆերի մակարդակ» ցուցանիշի ազդեցությունը «նորամուծություններ» հենասյան վրա և «կլաստերների զարգացվածության մակարդակը» ցուցանիշի ազդեցությունը, որպես համանման դիտարկվող 28 պետություններում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տարեկան ցուցանիշների դինամիկայի վրա: Վերլուծության արդյունքը ցույց է տվել, որ ՀՀ գիտելիքահենք տնտեսության մրցունակության ապահովման տեսանկյունից առաջնային է հետևյալ միջոցառումների իրականացումը (հերթականությունը ներկայացված է ըստ կարևորության աստիճանի).

1. ԳՀՓԿԱ-ների ուղղությամբ կազմակերպությունների կողմից իրականացրած ծախսերի ավելացում, այսինքն՝ ԳՀՓԿԱ-ների ուղղությամբ մասնավոր կազմակերպություններին արտոնությունների տրամադրում և դրանց խրախուսում՝ ԳՀՓԿԱ-ների իրականացման չափով պայմանավորված:
2. Նորամուծական կարողությունների բարելավում՝ նորամուծական կլաստերների հիմնում և կայացում, նորամուծությունների խթանման գործառույթը կրող կառույցների հիմնում, կատարելագործում:

3. ԳՀԻ-ների որակի բարձրացում՝ ԳՀԻ-ներում նորամուծական լաբորատորիաների ստեղծում և կատարելագործում:
4. ԳՀՓԿԱ-ների ուղղությամբ գիտություն-կրթություն-արդյունաբերություն կապի ամրապնդում՝ տեխնոլոգիաների տրանսֆերի գործընթացների խթանում, համապատասխան գործառույթներ ստանձնող կառույցի/ների հիմնում:
5. Գիտնականների և ճարտարագետների առկայության ապահովում՝ սփյուռքահայ գիտնականների ներգրավում ազգային նորամուծական կարողության զարգացման գործընթացներում, գիտնականների և ճարտարագետների խրախուսման բազմապիսի միջոցառումների իրականացում:

Ատենախոսության տվյալ գլխի վերջին հատվածում անդրադարձ է կատարվում ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության կայացման ուղղությամբ օրենսդրական բացթողումներին և դրանց հնարավոր լուծումներին: Դիտարկվում են ԳՀՓԿԱ-ների իրականացմանը և նորամուծական ձեռներեցության զարգացմանը միտված հարկային օրենսդրության փոփոխությունների իրականացման դրդապատճառները և հնարավորությունները, ինչպես նաև, միջազգային փորձից ելնելով՝ տնտեսության նորամուծական զարգացմանը միտված՝ ՊՄԳ-ն ընդլայնելու հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը:

Ատենախոսության **եզրակացություններ և առաջարկություններ** հատվածում ամփոփ նկարագրված են հետազոտության հիմնական արդյունքները և ներկայացվող առաջարկությունները, որոնց համաձայն՝ ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության մրցունակության ապահովումն իրականանալի է հետևյալ առաջնային հիմնախնդիրների լուծման պարագայում.

1. Մասնավոր ձեռնարկությունների կողմից ԳՀՓԿԱ-ների իրականացման ցածր մակարդակ, ինչպես նաև ԳՀՓԿԱ-ների ուղղությամբ մասնավոր ձեռնարկատիրական ծախսերի ցածր մակարդակ: Սա թերևս ՀՀ գիտելիքահենք տնտեսության ամենից խոցելի թույլ կողմն է: Տվյալ խնդրի լուծումը ենթադրում է ոլորտում տեղական և օտարերկրյա ներդրումների խթանում և համապատասխան գրավիչ ներդրումային միջավայրի ստեղծում, վենչուրային ներդրողների և բիզնես հրեշտակների ինստիտուտի կատարելագործում, վերջիններին արտոնությունների տրամադրում, ՊՄԳ ձևաչափով

նորամուծական գիտելիքահենք տնտեսական գործունեությամբ զբաղվող ՓՄՁ-ների հիմնում և զարգացում:

2. Տեխնոլոգիաների տրանսֆերի զարգացվածության ցածր մակարդակ: Այս ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները առաջին հերթին պետք է անդրադառնան ՀՀ-ում ՊՄԳ-ն ճնաչափով տեխնոլոգիաների տրանսֆերի գրասենյակ հիմնելու խնդրին: Այդ անհրաժեշտությունը նախ և առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ այն բավականին լուրջ քայլ կարող է լինել ՀՀ-ում որպես մրցակցային առավելություն դիտարկվող հիմնական գործոնների կատարելագործման ուղղությամբ:
3. ԳՀԻ-ների տեխնոլոգիական հագեցվածության մակարդակի կատարելագործման անհրաժեշտություն: Այս ուղղությամբ հարկ է իրականացնել համակարգված միջոցառումներ և դեպի ոլորտ ներգրավել մեծ թվով ներդրումներ՝ ԳՀԻ-ներում հիմնելով գիտական և կիրառական լաբորատորիաներ, բարելավելով միջազգային առաջատար գիտակրթական կազմակերպությունների հետ համագործակցության մակարդակը:

Ընդհանուր առմամբ ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության մրցունակության ապահովման տեսանկյունից տվյալ ատենախոսությունում կարևորվում է հետևյալ միջոցառումների իրականացումը.

1. Վենչուրային ֆինանսավորման ինստիտուտի զարգացում: Տվյալ ինստիտուտի զարգացումը ՀՀ-ում էապես կնպաստի բարձր տեխնոլոգիաների ոլորտում ձեռներեցության զարգացմանը, ընդ որում այս ուղղությամբ հարկ է մշակել այնպիսի քաղաքականություն, որ արտասահմանյան վենչուրային ներդրողներից զատ ակտիվություն ցուցաբերեն նաև տեղական ներդրողները՝ այդ գործընթացներում կիրառելով ժամանակակից մոտեցումներ, ստեղծելով քրաուդֆանդինգային համացանցային հարթակներ և նմանօրինակ գործիքակազմ: Պետական կարգավորման միջոցով հարկ է երկրում սահմանել վենչուրային ներդրողների մասով համապատասխան արտոնություններ:
2. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության բնագավառներում՝ SS, ճշգրիտ սարքաշինության, դեղա-

գործության, նանոտեխնոլոգիաների և այլ ոլորտներում նորամուծական կլաստերների հիմնում: Տվյալ քայլը էապես կխթանի ոլորտների զարգացմանը՝ արտահանման, լոգիստիկայի, ուսուցման մակարդակների և աշխատանքի արդյունավետության բարձրացման և կատարելագործման տեսանկյունից, հանգեցնելով նաև ՀՆԱ-ի շուրջ 1,7% աճին:

3. ՏՏ, դեղագործության, ճշգրիտ սարքաշինության ոլորտներում արտահանման խթանում: Բարձր տեխնոլոգիական ոլորտներում նկատելի է արտահանման համեմատական բարձր մակարդակի և տարեկան դինամիկայի դրական ուղղվածությանը: Բացի այդ, արտահանվող բարձր տեխնոլոգիական արտադրանքը բավականին մրցունակ է ներկրող պետություններում, ինչի մասին վկայում է իրականացված տնտեսաչափական հետազոտությունը, որը փաստում է նաև, որ արտահանման խթանումը էապես կնպաստի ոլորտների ընդհանուր հասույթի ավելացմանը, ըստ այդմ՝ այս ոլորտների նկատմամբ հարկ է իրականացնել հստակ սահմանված արտահանման խթանման քաղաքականություն:
4. Հարկային օրենսդրության փոփոխություններ՝ ի նպաստ ԳՀՓԿԱ-ների իրականացման և նորամուծական ձեռներեցության զարգացման: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՏՏ ոլորտից զատ՝ բարձր տեխնոլոգիական այլ ուղղություններում նույնպես տվյալ միջոցառումների իրականացման զգալի անհրաժեշտություն է նկատվում՝ հաշվի առնելով առաջ եկող բարձր տեխնոլոգիաների զարգացման արտաքին ու ներքին նոր հնարավորությունները:
5. Նորամուծական գործունեությունը խթանող ՊՄԳ հայեցակարգի կատարելագործում: Հարկ է մշակել նորամուծական տնտեսության կայացմանը միտված ՊՄԳ զարգացման համապատասխան հայեցակարգ, և ըստ տվյալ հայեցակարգի՝ հետևողականորեն իրականացնել ազգային նորամուծական համակարգի կատարելագործման քաղաքականությունը՝ հիմնելով սահմանված գործառույթներ իրականացնող համապատասխան կառույցներ և խթանելով տնտեսվարողներին՝ մասնակցելու պետության հետ համատեղ իրականացվելիք նորամուծական նախագծերի փոխշահավետ իրականացմանը:

**Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները հրատարակված են հեղինակի գիտական հոդվածներում**


1. Ամիրխանյան Վ., Գիտելիքահենք տնտեսության հիմնական բաղադրիչները և ՀՀ-ում դրանց զարգացման ավանդույթները և հնարավորությունները, «ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու – 1(23), Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան, Եր.՝ 2016թ., 474էջ, էջ 281-289
2. Ամիրխանյան Վ., Նորարարական կլաստերների էությունը և ՀՀ տնտեսությունում դրանց գործարկման հնարավորությունները, «Այլընտրանք» գիտական հանդես 2016#1 Հունվար-Մարտ, Երևան 2016թ., 572 էջ, էջ 342-350
3. Ամիրխանյան Վ., Հետխորհրդային երկրներում գիտելիքահենք տնտեսության զարգացման համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Բելոռուս, Էստոնիա, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտական հոդվածների ժողովածու – 2016, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. Տնտեսագիտության ինստիտուտ, Եր.՝ 2016, 470էջ, էջ 199-206
4. Ամիրխանյան Վ., ՀՀ-ում ազգային ինովացիոն համակարգի ձևավորման առաջնային մարտահրավերները, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, N5-6 (189-190), Եր.՝ 2016թ. 152 էջ, էջ 96-98
5. Ամիրխանյան Վ., ՀՀ-ում տեղեկատվական հասարակության զարգացման հայեցակարգի կիրառումը որպես գիտելիքահենք տնտեսության մրցունակության ապահովման գործիք, «Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ» Պարբերական գիտական ժողովածու, Գիրք 9, Եր.՝ «Օր-դար», 2016թ., 240էջ, էջ 50-53
6. Գիտություն-նորամուծություն-առևտրայնացում շղթայի ամրապնդման ուղիները ՀՀ-ում, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, N5-6 (201-202), Եր.՝ 2017թ. էջ 54-57
7. ՀՀ գիտության ոլորտի վերլուծությունը գիտելիքահենք տնտեսական համակարգի ձևավորման տեսանկյունից, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, N5-6 (201-202), Եր.՝ 2017թ.

8. Амирханян В. А. Венчурное финансирование как инструмент повышения конкурентоспособности наукоемких отраслей промышленности Республики Армения, Ежемесячный научный журнал «Региональные проблемы преобразования экономики» №1 (63), 2016, РАН, Дагестанский научный центр Институт Социально-экономических исследований, Махачкала: 2016г. , 168с. , стр. 20-24

АМИРХАНЯН ВААГН АРТУРОВИЧ

# ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ЭКОНОМИКИ ОСНОВАННОЙ НА ЗНАНИЯХ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – ‘‘Экономика, управление народным хозяйством и его сферами’’.

## РЕЗЮМЕ

В настоящее время беспрерывный рост темпов технологического развития постепенно приводит к преобразованию, усовершенствованию, либо спаду и исчезновению многих сфер экономической деятельности. Экономика РА, которая не выделяется обладанием высокого количесва природных ресурсов, в современных условиях ее развития сталкивается с новыми вызовами, связанными с технологическим развитием, производством конкурентоспособной высокотехнологичной продукции и развитием инновационного предпринимательства. Следовательно, тема исследований является актуальной, с точки зрения формирования новых концептуальных подходов для экономического развития РА.

***Целью данной диссертационной работы*** является выявление основных вызовов, касающихся разработки и реализации концептуальных подходов обеспечения конкурентоспособности экономики основанной на знаниях в РА, а также, исследование существующих проблем, выявление упущений и определение соответственных решений в данной сфере. Актуальность исследования проявляется необходимостью разработки новой стратегии повышения конкурентоспособности экономики основанной на знаниях в РА и укрепления национального инновационного потенциала.

В результате проведенных теоритических, методологических, статистических, эконометрических и других видов исследования в данной диссертации представлены основные подходы усовершенствования наукоемких экономических систем на основе международного опыта, выделена динамика развития научно-образовательной системы и инновационного предпринимательства. Методом SWOT анализа экономики основанной на знаниях в РА, выявлена основная картина отрасли. На основе рассматриваемых данных проведен эконометрический анализ основных факторов влияющих на обеспечение конкурентоспособности экономики, основаннойна знаниях в стране, в результате чего определены основные мероприятия и механизмы, применение которых является необходимым при решении выдвинутых вопросов.

В направлении основных вопросов и тем поднятых в рамках проведенного исследования в качестве ***научной новизны диссертации*** выделяется следующее:

- Выявлены основные факторы характеризующие конкурентоспособность наукоемкой экономики в РА, в результате эконометрических анализов выявлена связь между ними в результате чего стимулирование финансирования НИОКР со стороны частных компаний представлена в виде первоначального фактора обеспечения конкурентоспособности наукоемкой экономики РА, и предложены новые подходы для развития данного направления в РА. (формирование института венчурного финансирования, развитие инновационного предпринимательства на основе ГЧП, изменения в налоговом законодательстве и т.д.)
- Выявлены основные проблемы развития наукоемких отраслей экономики РА – информационных технологий, фармацевтической промышленности, точного приборостроения и других отраслей, проанализированаы показатели конкурентоспособности данных отраслей.
- В результате эконометрических анализов выявлено влияние изменения обьемов экспорта на изменение доходов в фармацевтической отрасли, вследствии чего обоснованы и

предложены новые подходы стимулирования развития фармацевтической промышленности (предоставление налоговых льгот, формирование кластера фармацевтической промышленности и т.д.)

- Обоснованы и представлены приоритетные направления развития и обеспечения конкурентоспособности наукоемкой экономики РА.

***Теоретическая и практическая значимость результатов диссертации.*** Результаты проведенного и представленного исследования и анализов, а также разработанные предложения, в рамках диссертационной работы, являются применимыми со стороны Правительства РА, в целях разработки политики, стратегий и концепций социально-экономического развития государства.

VAHAGN ARTUR AMIRKHANYAN

THE MAIN ISSUES OF ENSURING COMPETITIVENESS OF THE KNOWLEDGE-BASED ECONOMY IN THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 – “Economics, Management of Economy and its Spheres”.

SUMMARY

Currently, the continuous growth of the pace of technological development gradually leads to transformation, improvement, or decline and even disappearance of many spheres of economic activity.

The economy of the Republic of Armenia, which does not stand out for possessing a high number of natural resources, faces new challenges in the current conditions of its development, related to technological development, production of competitive high-tech products and development of innovative entrepreneurship. Consequently, the topic of research is relevant, from the point of view of the formation of new conceptual approaches for the economic development of the Republic of Armenia.

Consequently, the topic of research is actual from the point of view of the new conceptual approaches formation for the economic development of the Republic of Armenia.

**The purpose of this PhD thesis** is the identification of the main challenges related to the development and implementation of the conceptual approaches to ensure the competitiveness of the knowledge-based economy of the Republic of Armenia, as well as the study of existing problems, the identification of omissions and the appropriate solutions in this field.

As a result of the theoretical, methodological, statistical, econometric and other types of research conducted in this dissertation, the main approaches to the improvement of knowledge-based economic systems based on international experience are presented, and the development dynamics of the scientific education system and knowledge-based management is highlighted. The main picture of the industry is revealed using the SWOT analysis of the high-tech economy of the Republic of Armenia. Based on the data under consideration, an econometric analysis of the main factors affecting the competitiveness of the knowledge-based economy of the country were carried out, as a result of which the main measures and mechanisms are identified, the application of which is necessary to solve the issues raised.

For the main issues and topics raised in the study **as a scientific novelty of the dissertation**, the following are revealed:

- The main factors characterizing the competitiveness of the knowledge-based economy in the RA are revealed, as a result of econometric analyzes, a connection between them is revealed, as a result of which the stimulation of R & D financing from private companies is presented as an initial factor in ensuring competitiveness of the high-tech economy of the RA and the new approaches are proposed for the development of this direction in the RA.
- The development problems of the knowledge based spheres of the economy of the RA - information technologies, pharmaceutical industry, production of precision devices and other industries are identified, the competitiveness indicators of these industries are analyzed.
- As a result of econometric analyzes, the impact of changes in export volumes on the change in income in the pharmaceutical sector has been identified, and new approaches of fostering the development of the pharmaceutical industry are offered (tax exemptions, the pharmaceutical industry cluster formation, etc.)
- The priority directions of development and ensuring competitiveness of the knowledge-based economy of the RA are substantiated and presented.

**Theoretical and practical significance of the dissertation results**. The results of the conducted and presented research and analogies, as well as the worked-out proposals, within the framework of the thesis, are applicable by the Government of the Republic of Armenia in order to develop policies, strategies and concepts of the state's socioeconomic development.